

**Լուսինե Թասալյան**
**Հաշտարար**
**(+374)091156585**
**Email:TasalyanL@gmail.com**

Լուսինե Թասալյանը իրավաբանական կրթություն է ստացել Երևանի Տնտեսաիրավագիտական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով իրավագիտության բակալավրի Աստիճան (2008), այնուհետև ուսումը շարունակել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայում (2010):

2016 թվականի հունիսից դասավանդում է ՀՀ Ոստիկանության կրթահամալիրում:
2016 թվականի հունվարից ՀՀ Նախագահին կից Հանրային խորհրդի անդամ է:
2016 թվականի հունիսից ՀՀ Բնապահպանության նախարարին կից խորհրդակցական մարմնի անդամ:
2016 թվականի մայիսից հանդիսանում է ՀՀ Արդարադատության նախարարի կից խորհրդակցական մարմնի անդամ:
2016 թվականց ՀՀ Քաղաքաշինության նախարարին կից խորհրդակցական մարմնի անդամ:
2015 թվականից հանդիսանում է ՀՀ Արդարադատության նախարարի կից հանրային խորհրդում դիտորդ:

2015 թվականից հանդիսանում է ՀՀ Արդարադատության նախարարության կողմից արտոնագրված հաշտարար:
2015-2016թթ. ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմում:

2014 թվականից մինչև 2015 թվականի մարտ ամիսը աշխատել է ՀՀ Քննչական կոմիտեում, որպես առաջատար մասնագետ: 2014 թվականից մինչ օրս հասարակական հիմունքներով աշխատում է «Գիտակցի՛ր իրավունքդ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն և իրականացնում է հասարակական գործունեություն: 2014 թվականի հունվարից մինչև ապրիլ հանդիսացել է ՀՀ Ազգային Ժողովին կից երիտասարդական խորհրդարանի պատգամավոր (անկախ, ինքնառաջադրված) և սոցիալական հանձնաժողովի անդամ: 2012 թվականին աշխատել է Արտաշատ ՋՕԸ-ում, որպես իրավաբան:

Լուսինե Թասալյանը անցել է մասնագիտական մի շարք վերապատրաստումներ, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության, հաշտարարության, թրաֆիկինգի, երեխաների իրավունքներ,խտրականության դեմ, աշխատանքային վեճերի, ցանցային իրավունքի և անվտանգության ոլորտներում:

2014 թվականին մասնակցել է ՀՀ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի և ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից համատեղ կազմակերպած « Փախստականների իրավունքները դասընթացին:

Անձնական հետաքրքրություններ՝ նկարչություն, արշավ, դասական երաժշտություն:
Լեզուներ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն և գերմաներեն (բառարանի օգնությամբ):